

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան

17.10.2005թ. N212 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԲՈՍԱՎԱՐԻ  
ԵՎ ՈՒՂԵԿՑՈՐԳԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՎԱՆԱԲԱՐՏ  
ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 945-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ և 13-րդ կետերի բ) ենթակետերով

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում զբոսավարի և ուղեկցորդի կողմից անվանաքարտ կրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանին:

Կ.Ճշմարիտյան

Հավելված  
ՀՀ առևտրի և տնտեսական  
գարգացման նախարարի  
2005թ. հոկտեմբերի 17-ի  
N 212 - Ն հրամանի

## Կ Ա Ր Գ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԲՈՍԱՎԱՐԻ ԵՎ ՈՒՂԵԿՑՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՎԱՆԱՔԱՐՏ ԿՐԵԼՈՒ

1. Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված զբոսավարը և ուղեկցորդը (այսուհետ՝ Լիցենզավորված անձ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի «Զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 945-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ և 13-րդ կետերի ք) ենթակետերով նախատեսված անվանաքարտը կրում են սույն կարգին համապատասխան:

2. Լիցենզավորված անձն անվանաքարտ կրում է լիցենզավորվող գործունեություն իրականացնելու ողջ ժամանակահատվածի ընթացքում:

3. Լիցենզավորված անձը անվանաքարտը կրում է տեսանելի տեղում իր արտահագուստի կամ հագուստի վրա, կամ արտահագուստի վրա թափանցիկ նյութից կարված գրպանիկի մեջ:

4. Անվանաքարտի նվազագույն չափսերն են՝ 54մմx86մմ:

5. Անվանաքարտը պետք է պարունակի լիցենզավորված անձի գունավոր լուսանկարը՝ առնվազն 30մմx40մմ չափսերով:

6. Անվանաքարտը լրացվում է հայերեն և անգլերեն տպագիր տառերով:

7. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող լիցենզավորված անձի անվանաքարտի վրա լրացվում է

ա/ լիցենզավորված անձի անունը, ազգանունը և «Անհատ ձեռնարկատեր» նշումը

բ/ լիցենզավորված անձի լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը,

գ/ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման համարը:

8.Աշխատանքային պայմանագրով աշխատող լիցենզավորված անձի անվանաքարտի վրա լրացվում է

ա/ լիցենզավորված անձի անունը, ազգանունը,

բ/ լիցենզավորված անձի լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը

գ/ գործատու-կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը)

9.Անվանաքարտը վավերացվում է գործատուի ստորագրությամբ և կնիքով, կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում), եթե լիցենզավորված անձը գործունեություն է իրականացնում իր անունից:

10.Անվանաքարտի վրա կնիքը դրվում է այնպես, որ այն ծածկի լուսանկարի ներքևի մասը: